Հավելված 1

Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2026 թվականի մայիսի 19-ի թիվ ԿԽ-011/26 որոշման

Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ (ՔՐԵԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՄԲ) 2026 ԹՎԱԿԱՆԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուսուցման սույն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատավորների թեկնածուների հավակնորդների 2026 թվականի ցուցակում ընդգրկված անձանց (այսուհետ՝ Ունկնդիրներ) մասնագիտական պատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, գնահատման եղանակը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հիմք ընդունելով Բարձրագույն դատական խորհրդի 12.05.2026 թվականի թիվ ԲԴԽ-41-Ո-40 որոշումը և Դատական դեպարտամենտի ղեկավարի 13.05.2026 թվականի թիվ Ե-3711 գրությունը:

3. Ծրագիրը նպատակաուղղված է Ունկնդիրների մոտ դատավորի պաշտոնում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների ձևավորմանը, մասնագիտական գիտելիքների ծավալի ընդլայնմանը հետևյալ ոլորտներում.

1) ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է դատավորի էթիկայի, վարքագծի կանոնների և դատական արհեստի, դատական իշխանության անկախության, սահմանադրական արդարադատության արդի հարցերի, կառավարման հմտությունների և ներազդման հոգեբանության, զանգվածային լրատվության միջոցների հետ և այլ հանրային շփումներում, ինչպես նաև մեդիա և տեղեկատվական դաշտի իրավական կարգավորումների վերաբերյալ գործնական գիտելիքների և փորձառության ընդլայնմանն ու հմտությունների կատարելագործմանը, հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ընդլայնմանը, ինչպես նաև իրավավերլուծական փաստաթղթերի կազմման և իրավամեկնաբանման ռազմավարության հնարքների, աշխատանքի կազմակերպման, դատական գործերի դասակարգման և առաջնահերթության որոշման, ՄԻԵԴ որոնողական համակարգերի կիրառման,

դատավորներին անհրաժեշտ համակարգչային-տեղեկատվական ռեսուրսների օգտագործման հմտությունների ձևավորմանը:

2) ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏ

- **Քրեական իրավունք և դատավարություն:** Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է քրեական իրավունքի և դատավարության արդի հիմնահարցերին: Ուսուցումը նպատակաուղղված է հանցագործությունների որակման հիմնախնդիրների, արարքի հանցավորությունը, քրեական պատասխանատվությունը և պատիժը բացառող հանգամանքների, պատժի ինստիտուտին և պատիժ նշանակելուն առնչվող հարցերի, քրեական դատավարության տարբեր փուլերում ծագող հիմնախնդիրների, դատական քննության անցկացման և դատական ակտի մշակման հմտությունների, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, իրավական օգնության վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կիրառման հիմնահարցերի, դրանց կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի և ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների ու արդի այլ հիմնահարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնմանը, ինչպես նաև դատական վարույթ իրականացնելու, վերաբերելի իրավունքի վերհանման, վերլուծության և կիրառման համար անհրաժեշտ հմտությունների ու կարողությունների ձևավորմանը:

4. Գիտական աստիճան ունեցող հավակնորդների համար գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցումն ընդգրկում է Հատուկ մասնագիտական ոլորտի դասընթացները և փորձաշրջանը:

5. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով՝ լսարանային ուսուցման և փորձաշրջանի եղանակներով:

6. Լսարանային ուսուցումն իրականացվում է ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլների հիման վրա:

7. Փորձաշրջանը կազմակերպվում է անհատական ծրագրին համապատասխան, որում ընդգրկվում են փորձաշրջանի ընթացքում պարտադիր կատարման ենթակա առաջադրանքներ: Փորձաշրջանի մեկ օրվա տևողությունը 10 ակադեմիական ժամ է: Փորձաշրջանի ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 740 ակադեմիական ժամ: Փորձաշրջանի ավարտին յուրաքանչյուր Ունկնդիր գնահատվում է դրական կամ բացասական:

8. Ուսումնառության ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 1040 ակադեմիական ժամ:

9. Ուսումնառության տևողությունը սահմանվում է 7 ամիս (2026թ. հունիսի 22-ից 2027թ. հունվարի 22-ը)՝ ներառյալ 4 ամիս 15 օր տևողությամբ փորձաշրջանը (2026թ. սեպտեմբերի 07-ից 2027թ. հունվարի 22-ը):

II. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

	Դասընթացների ժամաքանակ	Քննաշրջանի ժամաքանակ	Փորձաշրջանի ժամաքանակ	Ընդհանուր ժամաքանակ
Ուսուցման 1-ին հատված (հունիսի 22 - հուլիսի 17)	**90 ժամ** (11 դասընթաց) (հունիսի 22 - հուլիսի 10)	**2 ժամ** (1 քննություն) (հուլիսի 13 - հուլիսի 17)	—	**92 ժամ**
Ուսուցման 2-րդ հատված (հուլիսի 20 – սեպտեմբերի 04)	**100 ժամ** (1 դասընթաց) (հուլիսի 20- օգոստոսի 28)	**4 ժամ** (1 քննություն) (օգոստոսի 31 – սեպտեմբերի 04)	—	**104 ժամ**
Ուսուցման 3-րդ հատված (սեպտեմբերի 07 – հոկտեմբերի 16)	**100 ժամ** (1 **դասընթաց**) (սեպտեմբերի 07 – հոկտեմբերի 09	**4 ժամ** (1 քննություն) (հոկտեմբերի 12 – հոկտեմբերի 16)	**120 ժամ** (սեպտեմբերի 07 - հոկտեմբերի 16)	**224 ժամ**
Ուսուցման 4-րդ հատված (հոկտեմբերի 19 – հունվարի 22)	—	—	**620 ժամ** (հոկտեմբերի 19 - հունվարիի 22)	**620 ժամ**
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**290 ժամ**	**10 ժամ**	**740 ժամ**	**1040 ժ**

III.ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

1. Ընդհանուր մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	JC-G-001-26	Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և դատական արհեստ	18
2.	JC-G-002-26	ՀՀ սահմանադրական արդարադատության արդի հարցեր	8
3.	JC-G-003-26	Դատավորի հաղորդակցությունը հանրության, ԶԼՄ-ների և սոցիալական մեդիայի հետ	6
4.	JC-G-004-26	Դատական իշխանության անկախությունը	6
5.	JC-G-005-26	Կառավարման հմտություններ և ներազդման հոգեբանություն	8
6.	JC-G-006-26	Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հիմնահարցեր	8
7.	JC-G-007-26	Դատական կառավարում, գործերի առաջնահերթության որոշում և ողջամիտ ժամկետների ապահովում	8
8.	JC-G-008-26	Իրավաբանական գիր և մեկնաբանում	8
9.	JC-G-009-26	Դատավորին անհրաժեշտ համակարգչային–տեղեկատվական ռեսուրսների օգտագործման հմտություններ	16

10.	JC-G-010-26	ՄԻԵԴ, ՍԴ և Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի խորացված որոնում և վերլուծություն	4
ԸՆԴՀԱՆՈՒՐ			**90**

2. Հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
11.	JC-CR-001-26	Քրեական իրավունքի արդի հարցեր	100
12.	JC-CR-002-26	Քրեական դատավարության արդի հարցեր	100
ԸՆԴՀԱՆՈՒՐ			**200**

IV. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. JC-G-001-26. Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և գործունեության գնահատում

Դասընթացը պայմանավորված է դատավորի էթիկայի, վարքագծի կանոնների և գործունեության գնահատման ոլորտում իրավակարգավորումներով սահմանված չափանիշների ներկայացման, այս ոլորտում գիտելիքների ծավալի ընդլայնման և կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացի շրջանակում քննարկման առարկա կդառնան դատավորի էթիկայի կանոնները, գործունեության գնահատման չափանիշները, դատավորի վարքագծի կանոններն ինչպես ի պաշտոնե գործելիս, այնպես էլ ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում, հատուկ անդրադարձ կկատարվի դատավորի ինքնաբացարկի հիմքերին, դրանց կիրառման առանձնահատկություններին, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների հետ և այլ շփումներում դատավորի վարքագծի առանձնահատկություններին:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JC-G-002-26, JC-G-003-26, JC-G-004-26, JC-G-005-26, JC-G-006-26, JC-G-007-26, JC-G-008-26 դասընթացների հետ համատեղ:

2. JC-G-002-26. ՀՀ սահմանադրական արդարադատության արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է ՀՀ Սահմանադրության և սահմանադրական արդարադատության ոլորտում Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է Հայաստանի Հանրապետության դատական իշխանության սահմանադրական հիմունքների (դատական իշխանության մարմինների համակարգի կազմակերպման և գործունեության կարգի), մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների, դրանց սահմանափակումների, սահմանադրական արդարադատության (Սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակի, Սահմանադրական դատարա-

նի և պետական իշխանության այլ մարմինների փոխհարաբերությունների, Սահմանադրական դատարանի լիազորությունների, դրանց իրականացման կարգի) վերաբերյալ հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JC-G-001-26, JC-G-003-26, JC-G-004-26, JC-G-005-26, JC-G-006-26, JC-G-007-26, JC-G-008-26 դասընթացների հետ համատեղ:

3. JC-G-003-26. Դատավորի հաղորդակցությունը հանրության, ԶԼՄ-ների և սոցիալական մեդիայի հետ

Դասընթացը պայմանավորված է դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության պահպանման, դատավորի անաչառության արտաքին ընկալման ապահովման, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական մեդիայի միջավայրում դատավորի պատշաճ վարքագծի կանոնների յուրացման անհրաժեշտությամբ: Դասընթացը նպատակաուղղված է դատավորների թեկնածու հավակնորդների մոտ ձևավորելու այնպիսի գիտելիքներ և գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են դատավորի հրապարակային խոսքի, հանրային հաղորդակցության, ԶԼՄ-ների հետ շփման և սոցիալական մեդիայի օգտագործման սահմանները ճիշտ ընկալելու և պահպանելու համար:

Դասընթացի շրջանակում քննարկման առարկա կդառնան դատավորի հաղորդակցության էթիկական և իրավական սահմանները, ընթացիկ կամ հնարավոր դատական գործերի վերաբերյալ հրապարակային արտահայտվելու թույլատրելիության չափանիշները, սոցիալական մեդիայում դատավորի վարքագծի առանձնահատկությունները, հանրային քննադատությանը և մեդիա ճնշումներին արձագանքելու ձևերը, դատական իշխանության հեղինակության, անկախության և անաչառության պահպանման երաշխիքները: Առանձին ուշադրություն կդարձվի այն հարցին, թե ինչպես պետք է դատավորը հավասարակշռի արտահայտվելու ազատությունը, պաշտոնական զսպվածությունը, հանրային հաշվետվողականությունը և արդարադատության հեղինակության պաշտպանությունը:

Դասընթացը կնպաստի դատավորի թեկնածու հավակնորդների՝ հանրային հաղորդակցության ռիսկերը ճիշտ գնահատելու, ԶԼՄ-ների և սոցիալական մեդիայի հետ շփումներում մասնագիտական զսպվածություն դրսևորելու, ինչպես նաև դատավորի անկախության, անաչառության և դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության պահպանման կարողությունների զարգացմանը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JC-G-001-26, JC-G-002-26, JC-G-004-26, JC-G-005-26, JC-G-006-26, JC-G-007-26, JC-G-008-26 դասընթացների հետ համատեղ:

4. JC-G-004-26. Դատական իշխանության անկախությունը

Դասընթացը պայմանավորված է դատական իշխանության անկախության վերաբերյալ Ունկնդիրներին գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է դատական իշխանության երաշխավորմանն առնչվող այնպիսի հիմնահարցեր, ինչպիսք են՝ դատավորների և դատարանների անկախության հիմունքները, դատական իշխանության սահմանադրական և միջազգային հիմքերը, դատավորների ներքին անկախության ապահովման հիմնախնդիրները, դատավորների նյութական և սոցիալական անկախության ապահովման, ինչպես նաև դատավորների պատասխանատվության հիմքերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JC-G-001-26, JC-G-002-26, JC-G-003-26, JC-G-005-26, JC-G-006-26, JC-G-007-26, JC-G-008-26 դասընթացների հետ համատեղ:

5. JC-G-005-26. Կառավարման հմտություններ և ներազդման հոգեբանություն

Դասընթացն անհրաժեշտ է Ունկնդիրներին կառավարման և առաջնորդության, ժամանակի կառավարման, ինչպես նաև հոգեբանական ազդեցության, դրա տեսակների, մեթոդների, մեխանիզմների և տարաբնույթ դրսևորումների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք կենսագործելու կարողությունների ու հմտությունների զարգացման համար:

Դասընթացը ներառում է՝

- կառավարչական հմտություններն ու առաջնորդման ոճերը,
- արդյունավետ պլանավորումը,
- թիմի ձևավորումը և թիմային աշխատանքի կազմակերպումը,
- ներազդման հոգեբանության հիմնական հասկացությունները, ներազդման տեսակները, մեթոդներն ու մեխանիզմները,
- կառուցողական (համոզում, ներշնչում և այլն) և ոչ կառուցողական (մանիպուլյացիա և այլն) ներազդման մեթոդների առանձնահատկությունները,

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JC-G-001-26, JC-G-002-26, JC-G-003-26, JC-G-004-26, JC-G-006-26, JC-G-007-26, JC-G-008-26 դասընթացների հետ համատեղ:

6. JC-G-006-26. Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիոն երևույթներին, դրանց դեմ տարվող պայքարի ընդհանուր իրավիճակին, հակակոռուպցիոն պայքարի իրավական (ներպետական և միջազգային, այդ թվում՝ ԵՄ Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և ԵՄ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումների գնահատման փորձագետների հանձնախմբի (ՄԱՆԻՎԱԼ) հանձնարարականները) և ինստիտուցիոնալ շրջանակներին (ներպետական և միջազգային, այդ թվում՝ ԳՐԵԿՈ և ՄԱՆԻՎԱԼ գործունեությունը), համապատասխան այլ շահագրգիռ կողմերի (հասարակական կազմակերպությունների, ՋԼՄ-ների) մասնակցության և պետության կողմից ձեռնարկվող միջոցառումներին, դատավորների բարեվարքությանը վերաբերող արդի խնդիրներին, այդ թվում՝ հայտարարագրերին վերաբերող հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JC-G-001-26, JC-G-002-26, JC-G-003-26, JC-G-004-26, JC-G-005-26, JC-G-007-26, JC-G-008-26 դասընթացների հետ համատեղ:

7. JC-G-007-26. Դատական կառավարում, գործերի առաջնահերթության որոշում և ողջամիտ ժամկետների ապահովում

Դասընթացը պայմանավորված է դատավորի կողմից դատական գործերի արդյունավետ կառավարման, աշխատանքային ծանրաբեռնվածության ճիշտ պլանավորման, գործերի առաջնահերթության որոշման և դատաքննության ողջամիտ ժամկետների ապահովման համար անհրաժեշտ գիտելիքների ու գործնական հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ: Դասընթացը նպատակաուղղված է դատավորների թեկնածու հավակնորդների մոտ զարգացնելու դատական գործընթացը կազմակերպելու, դատական նիստերը արդյունավետ վարելու, ձգձգումները կանխելու և յուրաքանչյուր գործով արդարադատության ժամանակին իրականացումն ապահովելու կարողություններ:

Դասընթացի շրջանակում քննարկման առարկա կդառնան դատական գործերի հոսքի կառավարումը, գործերի բարդության, հրատապության և հանրային կամ մասնավոր նշանակության հիման վրա առաջնահերթության որոշման չափանիշները, դատական նիստերի պլանավորումը, դատավարության մասնակիցների վարքագծով պայմանավորված ձգձգումների կանխարգելումը, դատավորի և աշխատակազմի միջև աշխատանքի արդյունավետ բաշխումը, ինչպես նաև ողջամիտ ժամկետի իրավունքի ապահովման սահմանադրական և միջազգային չափանիշները:

Դասընթացը կնպաստի դատավորի թեկնածու հավակնորդների՝ դատական ծանրաբեռնվածությունը արդյունավետ կառավարելու, գործերի քննության տևողությունը վերահսկելու, դատական գործընթացի անհարկի ձգձգումները կանխելու և դատական ակտերի ժամանակին ու որակյալ կայացման համար անհրաժեշտ կազմակերպչական հմտությունների զարգացմանը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JC-G-001-26, JC-G-002-26, JC-G-003-26, JC-G-004-26, JC-G-005-26, JC-G-006-26, JC-G-008-26 դասընթացների հետ համատեղ:

8. JC-G-008-26. Իրավաբանական գիր և մեկնաբանում

Դասընթացը պայմանավորված է համոզիչ իրավական վերլուծությունների կատարման, իրավամեկնաբանողական հնարքների կիրառման ոլորտում կարողությունների և հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- իրավավերլուծական ռազմավարությունների ընտրության հետ կապված գործնական հարցերը,
- օրենսդրական և նախադեպային տեքստերի հետ աշխատանքում իրավամեկնաբանողական հնարքների կիրառման հետ կապված գործնական հարցերը, իրավանորմերի վերլուծության մեթոդիկան,
- դատավարական փաստաթղթերի կազմման հմտությունները (իրավական լեզու, իրավական մտքի ձևակերպում, փաստերի, ապացույցների, իրավանորմերի շարադրանք):

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JC-G-001-26, JC-G-002-26, JC-G-003-26, JC-G-004-26, JC-G-005-26, JC-G-006-26, JC-G-007-26 դասընթացների հետ համատեղ:

9. JC-G-009-26. Դատավորին անհրաժեշտ համակարգչային–տեղեկատվական ռեսուրսների օգտագործման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է Ունկնդիրներին համակարգչային ծրագրերով աշխատելու, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և իրավական տեղեկատվական որոնման համակարգերից օգտվելու գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև այդ գիտելիքների ընդլայնման շարունակական զարգացման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է «Microsoft Office Word» և «Microsoft Office Excel» ծրագրերից առավել արդյունավետ օգտվելու կարողությունները, ինչպես նաև իրավական-տեղեկատվական-որոնողական՝ «http://www.arlis.am/», «http://datalex.am/», «https://www.e-draft.am/», «https://hudoc.echr.coe.int/» և այլ համացանցային ռեսուրսներից օգտվելու ունակություններն ու համակարգչից օգտվելու այլ հմտություններ:

Դասընթացի ընթացքում կքննարկվեն գործերի քննության ընթացքում օգտագործվող էլեկտրոնային գործինքերը կիրառումը, դատական համակարգում արհեստական բանականության գործիքների կիրառման աճող նշանակությունը, ինչպես նաև դրանց օգտագործման իրավաչափության, անվտանգության, էթիկական սահմանների, դատավորի անկախության, անաչառության, անձնական տվյալների պաշտպանության և դատական ակտերի որակի ապահովման անհրաժեշտությունը:

10. JC-G-010-26. ՄԻԵԴ, ՍԴ և Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի խորացված որոնում և վերլուծություն

Դասընթացը պայմանավորված է դատավորի թեկնածու հավակնորդների մոտ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը ոչ միայն որոնելու, այլև ճիշտ վերլուծելու, համադրելու և կոնկրետ գործի փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելու հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ: Դասընթացը նպատակաուղղված է զարգացնելու այնպիսի կարողություններ, որոնք անհրաժեշտ են դատական ակտերի պատճառաբանվածության, իրավական կանխատեսելիության, միասնական դատական պրակտիկայի և մարդու իրավունքների պաշտպանության բարձր չափանիշների ապահովման համար:

Դասընթացի շրջանակում քննարկման առարկա կդառնան ՄԻԵԴ HUDOC որոնողական համակարգի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերի որոնման ու համակարգման գործիքները, նախադեպային իրավունքի վերաբերելիության որոշման չափանիշները, ratio decidendi-ի և obiter dictum-ի տարանջատումը *(atio decidendi և obiter dictum հասկացությունները վերաբերում են*

դատարանի որոշման մեջ արտահայտված մտքերի իրավական նշանակությանը: Ratio decidendi նշանակում է դատարանի որոշման այն հիմնական իրավական պատճառաբանությունը, որի վրա ուղղակիորեն հիմնվել է գործի լուծումը: Այսինքն՝ դա այն իրավական դիրքորոշումն է, առանց որի դատարանը չէր կարող հանգել տվյալ եզրակացությանը: Այն ունի նախադեպային նշանակություն և կարող է պարտադիր կամ ուղենշային լինել հետագա գործերի համար: Obiter dictum նշանակում է դատարանի որոշման մեջ արտահայտված այնպիսի դիտարկում, պարզաբանում կամ լրացուցիչ միտք, որը օգտակար է իրավական վերլուծության համար, բայց անմիջականորեն չի պայմանավորել գործի ելքը: Այն կարող է ունենալ համոզիչ նշանակություն, սակայն սովորաբար չունի նույն պարտադիր ուժը, ինչ ratio decidendi-ն:), իրավական դիրքորոշումների համադրումը, նախադեպի փաստական հիմքի և քննվող գործի հանգամանքների համեմատական վերլուծությունը, ինչպես նաև ներպետական իրավունքի և ՄԻԵԿ չափանիշների ներդաշնակ մեկնաբանման մեթոդաբանությունը:

Դասընթացը կնպաստի դատավորի թեկնածու հավակնորդների՝ նախադեպային իրավունքը մեխանիկորեն չվկայակոչելու, այլ դրա իրավական բովանդակությունը քննվող գործի փաստերի հետ կապակցված կիրառելու, ՍԴ, Վճռաբեկ դատարանի և ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների միջև հնարավոր համադրելիությունը գնահատելու և իրավաբանորեն հիմնավորված, կանխատեսելի ու համոզիչ դատական ակտեր կազմելու կարողությունների զարգացմանը:

11. JC-CR-001-26. Քրեական իրավունքի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումների, քրեական օրենսգրքի նորմերի գիտական վերլուծության ու կիրառման արդյունքում բացահայտած թերությունները հաղթահարելու, քրեական իրավունքի տեսության ու օրենսդրության ժամանակակից միտումներին համահունչ հայեցակարգային նոր կառուցակարգերի ու ինստիտուտների, վիճահարույց հարցերի շուրջ ՄԻԵԴ, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- Հանցագործությունների որակման հիմնախնդիրները, մասնավորապես՝
  - հանցագործությունների որակման իմացաբանական հիմունքները,
  - հանցակազմի տարրերի և (օբյեկտ, օբյկետիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ) հանցագործությունների որակման առանձնահատկությունները,
  - չավարտված հանցավոր գործունեության և հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքում հանցագործությունների որակման հիմնախնդիրները,
  - հանցագործությունների բազմակիության դեպքում հանցագործությունների որակման և եզակի բարդ հանցագործություններից դրանց սահմանազատման հիմնախնդիրները,

– քրեաիրավական նորմերի մրցակցության (բովանդակային և տեմպորալ) դեպքում հանցագործությունների որակման հիմնախնդիրները,
– հանցակցությամբ կատարվող հանցանքների որակման հիմնախնդիրները, մասնավորապես՝ հանցակիցների տեսակների և հանցակցության ձևերի տարանջատման հիմնահարցերը և հանցակցության ձևերի որակման առանձնահատկությունները, հանցակցի սահմանազանցման, հանցակցի կողմից հանցագործությունից կամովին հրաժարվելու, չհաջողված հանցակցության որակման, հատուկ սուբյեկտով հանցագործություններում հանցակցության որակման հիմնահարցերը, ինչպես նաև հանցագործության միջնորդավորված կատարման որակման հիմնախնդիրներն ու առնչակցությունը հանցակցությունից սահմանազատելու և որակելու հիմնահարցերը,
– բլանկետային նորմերով և արժեքավորվող հատկանիշներով հանցագործությունների որակման առանձնահատկությունները.

- արարքի հանցավորությունը, քրեական պատասխանատվությունը և պատիժը բացառող հանգամանքները, պատժի ինստիտուտին և պատիժ նշանակելուն առնչվող հարցերը,
- ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված հանցավոր արարքների (մասնավորապես՝ մարդու, սեփականության, տնտեսության և տնտեսական գործունեության, հասարակական կարգի և բարոյականության, հասարակական անվտանգության, բնակչության առողջության, պետական իշխանության, զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների և այլն) ճշգրիտ որակման հիմնահարցերը, հարակից հանցակազմերը միմյանցից սահամանզատելու հիմնախնդիրները և դրանց լուծման ոլորտում օրենսդրական ու իրավակիրառ փորձը,
- ՀՀ քրեական նոր օրենսգրքի բաժին 7-ով նախատեսված՝ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության և իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցները,
- քրեական իրավունքի ոլորտում ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները, ՀՀ նկատմամբ դրա կիրառման հարցերը, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակությունը (այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության՝ մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքները, դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի հարցերը),
- քրեական օրենսդրության հիմնադրույթները մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

12. JC-CR-002-26. Քրեական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է քրեական վարույթի նոր իրավական զարգացումների, քրեական դատավարության օրենսգրքի նորմերի գիտական վերլուծության ու կիրառման

արդյունքում բացահայտված թերությունները հաղթահարելու, քրեական դատավարության տեսության ու օրենսդրության ժամանակակից միտումներին համահունչ հայեցակարգային նոր կառուցակարգերի ու ինստիտուտների, ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերի, վիճահարույց հարցերի շուրջ ՄԻԵԴ, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորումների էության և տրամաբանության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- քրեական դատավարության օրենսգրքի նպատակը և վերջինիս առանձնահատկությունները,
- քրեական հետապնդումը բացառող հանգամանքները,
- մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդի հարցերը,
- մինչդատական ակտերի իրավաչափության դատական երաշխիքները, դրանց շրջանակները,
- բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի հիմնախնդիրները,
- անչափահասների մասնակցությամբ քրեական վարույթի առանձնահատկությունները,
- ապացույցները և ապացուցման գործընթացի հիմնախնդիրները քրեական դատավարությունում,
- գույքային հայցի լուծման, դատական ծախսերի վերականգնման և իրեղեն ապացույցների տնօրինման հիմնախնդիրները,
- քրեական վարույթում դատական քննության անցկացման հմտությունները, մասնավորապես՝ դատաքննության անցկացման ձևին, այդ թվում՝ դատական նիստի ընթացակարգի պահպանմանը, հարցաքննությունների կատարմանը, ապացույցների հետազոտմանը, միջնորդություններին արձագանքմանը, ինչպես նաև դատավճռի կայացմանը վերաբերող գործնական հարցերը,
- իրավական օգնության վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կիրառման հիմնախնդիրները,
- դատական ակտի մշակման հմտությունները, մասնավորապես՝ դատական վարույթների ընթացքում դատարանի կողմից կայացվող դատական ակտերի կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջները,
- առաջին ատյանի դատարանում դատաքննության առանձնահատկությունները (նախնական դատալսումները, հիմնական դատալսումները, լրացուցիչ դատալսումները և դատավճիռ կայացնելը),
- վերանայման վարույթների առանձնահատկությունները,
- ՀՀ քրեական դատավարության առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնախնդիրները,
- քրեական դատավարության ոլորտում ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիքների ապահովման հիմնախնդիրները, դրանց

վերաբերյալ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները և ՀՀ-ում դրանց կիրառման հիմնահարցերը,

- ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերը (այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերի և դրանց կիրառման առանձնահատկությունների, ինչպես նաև «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքների, ինչպես նաև դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի հարցերը),
- մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթը քրեական դատավարությունում, համաձայնեցման, համագործակցության և արագացված վարույթները քրեական դատավարությունում,
- քրեական դատավարության սկզբունքների նոր համակարգը, քրեական դատավարության նոր հասկացութային ապարատը, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության նոր կառուցակարգերին վերաբերող հարցերը,
- քրեադատավարության օրենսդրության հիմնադրույթները մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

Խորհրդի նախագահ՝ **Ա. Թովմասյան**